ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
03.02.2023թ. թիվ 4/8-Լ որոշման

Պալատի խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱԲԱՆ ԳԻՏՆԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԿԱՐԳ

ք. Երևան, 2023թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով **(այսուհետ՝ Կարգ)** սահմանվում են «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի **(այսուհետ նաև՝ ՀՀ փաստաբանական ակադեմիա)** կառավարման խորհրդի **(այսուհետ՝ Կառավարման խորհուրդ)** գիտնական անդամների թեկնածուների կողմից ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին **(այսուհետ՝ Խորհուրդ)** ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման և ուսումնասիրման կարգն ու պայմանները:

2. Սույն կարգով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են «Փաստաբանության մասին» օրենքով և ՀՀ փաստաբանական ակադեմիայի կանոնադրությամբ:

II. ԳԻՏՆԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄԸ ԵՎ ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

3. Թեկնածուներին ներգրավելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի ընտրություններից առնվազն 50 օր առաջ հայտարարում է մրցույթ (**այսուհետ՝ Մրցույթ**):

4. Մրցույթի հայտարարության հրապարակման հաջորդ օրվանից 10 (տասը) օրվա ընթացքում Կառավարման խորհրդի իրավաբան գիտնական անդամի թեկնածություն ներկայացնելու համար Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է ներկայացնեն տվյալ հաստատության ղեկավարի կողմից ստորագրված դիմում, որում առնվազն պետք է նշվի թեկնածուի անունը, ազգանունը, հայրանունը, հեռախոսահամարը, հասցեն և էլեկտրոնային փոստի հասցեն:

5. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված դիմումին պետք է կցվի.

1) տեղեկանք՝ գիտական աշխատանք իրականացնելու վերաբերյալ կամ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկում իրավունք դասավանդելու վերաբերյալ.

2) թեկնածուի մեկ գունավոր լուսանկար.

3) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

4) ինքնակենսագրական թերթիկ.

5) բարձրագույն իրավաբանական կրթության մասին փաստաթղթի պատճենը.

6) գիտական աստիճանի և գիտական կոչման (առկայության դեպքում) վերաբերյալ փաստաթղթի պատճենը.

7) թեկնածուի գրավոր համաձայնությունը Կատավարման խորհրդի կազմում ընդգրվելու վերաբերյալ:

6. Սույն կարգով սահմանված փաստաթղթերը կարող է ներկայացվել առձեռն՝ մուտք անելով դիմումը և կից փաստաթղթերը ՀՀ փաստաբանների պալատ, փոստով կամ պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկելով:

7. Իրավաբան գիտնական թեկնածուների վերաբերյալ տեղեկությունները և դրանց վերաբերելի փաստաթղթերը Խորհրդի գործունեության կարգին համապատասխան տեղադրվում են էլեկտրոնային պահոցում (**այսուհետ՝ Պահոց**):

III. ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՀՄԱՆՆԵՐԸ

8. Դիմումները և կից փաստաթղթերը ստանալուց հետո, ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարը տասնօրյա ժամկետում յուրաքանչյուր դիմողի վերաբերյալ կատարում է ուսումնասիրություն և ներկայացնում է տեղեկանք: Ներկայացված փաստաթղթերը և տեղեկանքները տեղադրվում են Պահոցում կամ էլեկտրոնային փոստով ուղարկվում են Խորհրդի անդամներին:

9. Խորհուրդը ծանուցման հրապարակման տասնմեկերորդ օրվանից սկսած 20 (քսան) օրվա ընթացքում որոշում է կայացնում Խորհրդի գիտնական անդամին թեկնածուների շարքում ներառելու (թեկնածուների ցանկը հաստատելու) կամ դիմումը մերժելու մասին: Խորհրդի նիստին թեկնածուները չեն հրավիրվում:

10. Խորհուրդը մերժում է իրավաբան գիտնականին թեկնածուների ցանկում ներառելու դիմումը, եթե դիմումը կամ կցված փաստաթղթերը չեն համապատասխանում Օրենքի, ՀՀ փաստաբանական ակադեմիայի կանոնադրության կամ սույն կարգի պահանջներին:

IV. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳԻՏՆԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

11. Կառավարման խորհրդի գիտնական անդամների ընտրությունը կատարվում է քվեաթերթիկներով, որում ներառվում են Խորհրդի կողմից հաստատված թեկնածուների ցանկում ընդգրկված բոլոր թեկնածուները՝ ազգանունների այբբենական կարգով:

12. Խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է ընտրել առավելագույնը գիտնական անդամի երկու թեկնածու: Երկուսից ավելի թեկնածուի ընտրելու դեպքում քվեաթերթիկը կհամարվի անվավեր: Քվեաթերթիկը ստորագրում է խորհրդի անդամը:

13. Եթե Կառավարման խորհրդի գիտնական անդամի որևէ թեկնածու ստանում է Խորհրդի նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելին, ապա համարվում է ընտրված Խորհրդի անդամ:

14. Եթե որևէ անդամ ընտրված չի համարվում, ապա անցկացվում է երկրորդ փուլ, որին մասնակցում են ամենաշատ ձայներ ստացած չորս թեկնածու: Սույն կետում նշված դեպքում, Խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է ընտրել ոչ ավել քան երկու թեկնածու: Ընտրված են համարվում ամենաշատ ձայներ ստացած երկու թեկնածուները:

15. Եթե ընտրվել է միայն մեկ անդամ, ապա երկրորդ անդամին ընտրելու համար անցկացվում է երկրորդ փուլ, որին մասնակցում են ամենաշատ ձայներ ստացած երեք թեկնածու: Սույն կետում նշված դեպքում, Խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է ընտրել միայն մեկ թեկնածու: Ընտրված է համարվում այն

թեկնածուն, որը ստանում է ամենաշատ ձայները:

V. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

16. Փաստաբանների պալատի խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի առաջադրելու ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի՝ փաստաբան անդամի թեկնածու՝ վերջինիս համաձայնությամբ: Փաստաբանների պալատի խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է քվեարկել ոչ ավելի, քան երկու մասնակցի օգտի: Ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները:

17. ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը՝ Կառավարման խորհրդի իրավաբան գիտնական անդամների ընտրության և փաստաբան անդամների ընտրության արդյունքների հիման վրա, հաշվի առնելով նաև ՀՀ արդարադատության նախարարի՝ Կառավարման անդամի առաջարկը, որոշում է երեք տարի ժամկետով ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհուրդը կազմավորելու մասին:

VI. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

19. Սույն կարգն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը: